



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 264-Ա  
« 24 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023Թ

**«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՎԵՐՈՆԻԿԱ ՀԱԿՈՔՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով Անահիտ Սարգսյանի հետ կնքած 2018 թվականի նոյեմբերի 26-ի N405 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝


1. 2023 թվականի նոյեմբերի 27-ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Սարգսյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2018 թվականի նոյեմբերի 26-ի N405 աշխատանքային պայմանագիրը:

2. 2023 թվականի նոյեմբերի 27-ից «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն դպրոցի տնօրենի տեղակալ Վերոնիկա Հակոբյանի վրա:

3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

 Recoverable Signature



ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

**Ք. Եղեգնաձոր**

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**



Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի  
2023թ. նոյեմբերի 24-ի  
N 264-Ա որոշման

**«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ  
ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ**

Հանձնաժողովի նախագահ՝

Տատյանա Պոլուդնիցինա

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի  
կրթության, մշակույթի և սպորտի վարչության  
պետ

Անդամներ՝

Նարինե Մաղաքյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի  
իրավաբանական բաժնի պետ

Անահիտ Սարգսյան

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի  
ֆինանսական վարչության պետի  
պարտականությունները կատարող